

ԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հայցորդ,  
ՀՀ զինվորական կոմիսարիատի ավագ սպա-իրավաբան,  
փոխգնդապետ

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՒԿԼՈՒՄ**

Հոդվածում ներկայացված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետությունում, վերջին ներքաղաքական զարգացումների հաշվառմամբ, կառավարման խորհրդարանական մոդելին անցման պարագայում քաղաքական ուժերի կողմից խորհրդարանի աշխատանքների բոլորտումը կարող է հանգեցնել խորհրդարանում պաշտպանական-անվտանգային շահերի համար առանցքային նշանակություն ունեցող և ձայների որակյալ ու բացարձակ մեծամասնություն պահանջող որոշումների ընդունման արգելափակմանը: Խորհրդարանական կառավարման մոդելում պետական համակարգի կայունության ու ազգային անվտանգության ապահովման տեսակետից որպես ռիսկ անհրաժեշտ է գնահատել քաղաքական մեծամասնության ու կայուն կոալիցիայի հուսալիությունը: Հայաստանի խորհրդարանի պատմության ընթացքում կայուն կոալիցիաները միշտ պայմանավորված են եղել դոմինանտ քաղաքական ուժի առկայությամբ: Դրա բացակայության պարագայում իրապես կարող է վտանգվել քաղաքական կառավարման ողջ գործընթացը:

*Հիմնաբառեր - կառավարման մոդել, սահմանադրական բարեփոխումներ, քաղաքական համակարգ, իրավական հիմք, իշխանություն, անվտանգություն, պաշտպանություն, խորհրդարան, կառավարություն, պաշտպանական-անվտանգային շահեր:*

Պետության և հասարակության բնականոն ու ներդաշնակ զարգացման համար բացառիկ կարևորության խնդիր է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների փոխհամաձայնեցված գործունեության ապահովումը, նրանց լիազորությունների սահմանադրական հստակ կանոնակարգումը և դրանց իրականացման վերահսկումը:

Իշխանությունների տարանջատումը, առանց որի անհնար է պատկերացնել ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության գոյությունը, միաժամանակ խնդիր է առաջադրում՝ անհրաժեշտ զսպումների ու հակակշիռների մեխանիզմի գործադրմամբ և սահմանադրությամբ ամրագրված իշխանության տարբեր մարմինների փոխհարաբերությունների հաշվեկշռի պահպանմամբ ապահովել պետության և հասարակության դինամիկ ու կայուն առաջընթաց: Այդ համատեքստում կառավարման մոդելի սահմանման ժամանակ կարևորվում է իշխանության մակրոփոստիտուտների և դրանց հարաբերությունների ձևավորումը, հատկապես կառավարության ու խորհրդարանի փոխհարաբերությունների բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետությանը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության՝ պետաիշխանական զարգացմանը համընթաց, առաջարկվում են պետության և պետական իշխանության համակարգի

կազմակերպմանն ու գործունեությանը ներկայացվող նոր մարտահրավերներ: Դրանք հատկապես ակնառու են պետական իշխանության համակարգի արդյունավետ համակարգային և գործառնական տարանջատման ապահովման խնդրի առկայության պայմաններում, երբ չափազանց կարևոր նշանակություն է ստանում իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգի լիարժեք և արդյունավետ կենսագործումը՝ անհրաժեշտ ու բավարար սահմանադրական երաշխիքների ստեղծմամբ և ամրագրմամբ:

Արդի պայմաններում, ելնելով կառավարման ձևից, պետությունների ավանդական դասակարգումը միապետությունների և հանրապետությունների դեռևս բավարար չէ, քանզի վերջիններս կարող են հիմնված լինել ինչպես մեկիշխանության, այնպես էլ իշխանությունների բաժանման սկզբունքի վրա: Այդ սկզբունքի վրա հիմնված կառավարման ձևերը կարելի է բաժանել 3 խմբի՝ դուալիստական, խորհրդարանական և խառը<sup>2</sup>: Հանրապետությունը կառավարման այնպիսի ձև է, որի պետական իշխանության բարձրագույն մարմինները ձևավորվում են ուղղակի կամ անուղղակի ընտրությունների միջոցով, որի դեպքում ժողովուրդը մասնակցում է իշխանության ձևավորման գործընթացին, ունի լայն իրավունքներ և ազատություններ: Այժմ առանձնացվում են հանրապետական կառավարման երեք հիմնական տարատեսակներ՝ նախագահական, խորհրդարանական և խառը (նա-

www.journal.lawinstitute.am

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

խազահական-խորհրդարանական կամ կիսանախազահական):

Խորհրդարանական հանրապետությունում (Իտալիա, Գերմանիա և այլն) գերակայում է խորհրդարանի իշխանությունը, որը կազմավորում է կառավարություն, նշանակում վարչապետին, հրապարակում օրենքներ, հաստատում բյուջեն և այլն: Այս կառավարման ձևի առավելություններից է իշխանության բարձրագույն օղակների միասնությունը՝ քանզի գործադիր իշխանության՝ կառավարության ղեկավարի և անդամների նշանակման գործընթացում առանցքային է խորհրդարանի, ավելի ստույգ՝ խորհրդարանական մեծամասնության ղեկավարությունը. խորհրդարանն է վերահսկում դրանց գործունեությունը: Քանի դեռ կառավարությունը վայելում է օրենսդիրների մեծամասնության աջակցությունը, այն կարող է բնականոն իրականացնել իր լիազորությունները: Կորցնելով խորհրդարանական մեծամասնության աջակցությունը՝ կառավարությունը հրաժարական է տալիս: Խորհրդարանական հանրապետություններում նախագահի ղեկավարությունն էական չէ, և, ըստ էության, գործադիր իշխանությունը հանդիսանում է օրենսդիր իշխանության «շարունակությունը»: Դրանով իսկ պետական իշխանության երկու ճյուղերի միջև հակամարտության հավանականությունը հասցվում է նվազագույնի<sup>4</sup>:

Մյուս կողմից, խորհրդարանական հանրապետության թերություններից է կուսակցական համակարգի մասնատվածությունը, որը հնարավոր է նաև հանգեցնի խորհրդարանական կոալիցիայի համանման մասնատվածության և կառավարության անկայունության: Պետության կուսակցական համակարգի թերզարգացած լինելու պայմաններում անգամ շատ փոքր կուսակցությունները կարող են դառնալ խորհրդարանական մեծամասնություն կազմող կոալիցիայի մասնիկը, ինչը կարող է ոչ պակաս կործանարար լինել, քան փակուղին օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերություններում: Նման պայմաններում միանգամայն իրական է դառնում բռնակալական իշխանության վտանգը, որն ունակ է ստեղծել խորհրդարանական պարզ մեծամասնություն: Այսինքն, խորհրդարանական կառավարման ձևի արդյունավետությունը և կայունությունը կախված է խորհրդարանում ներկայացված լինելու մրցապայքարին ներգրավված քաղաքական կուսակցությունների «բնույթից»<sup>5</sup>:

Որպես կանոն, ներկայացուցչություն ասելով նկատի են ունենում ընտրողների և ընտրյալների միջև կապը: Ի. Կոտելևսկայան իրավացիորեն գրում է, որ ներկայացուցչությունն իրականացվում է ընտրությունների միջոցով, նաև արտահայտվում է հասարակական շահերը նկատելու, արտահայտելու և դրանք օրենքների ու նորմերի, վերահսկիչ և

հանրային միջնորդությունների մեջ արտացոլելու ձևով: Բ. Գաբրիչիձեն և Ա. Չերնյավսկին նշում են, որ ներկայացուցչությունը յուրահատուկ է միայն պառլամենտին, և, ըստ այդմ էլ, պառլամենտը հանդիսանում է պետության միակ իրական ներկայացուցչական մարմինը:

Պառլամենտի՝ որպես ներկայացուցչական ղեկավարման մարմնի գործունեությունը, կազմավորումը, գործառույթները, կազմակերպման ներքին խնդիրները, փոխհարաբերությունները պետական իշխանության մյուս մարմինների հետ միշտ էլ գտնվել են քաղաքական իրականության և սահմանադրաիրավական դոկտրինայի առանցքում<sup>6</sup>: Խորհրդարանական հանրապետությունում պառլամենտի կողմից կառավարությունը կազմավորվում է կուսակցական սկզբունքով՝ այն կուսակցություններից, որոնք ընտրություններում հաղթել են և մեծամասնություն կազմել խորհրդարանում կամ նրա ստորին պալատում: Վարչապետի գլխավորությամբ կառավարությունն առաջնակարգ դեր է խաղում երկրի քաղաքական կյանքում: Հետևաբար, իրականացնող կուրսի և իր գործունեության համար նա քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև:

Այս ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ խորհրդարանական բնույթի կառավարումը ժողովրդավարության վերջնական երաշխիք չէ, բայց նաև ավելի մեծ հավանականություն է ստեղծում, որ երկիրը շրջանցի հակաժողովրդավարական ցնցումները: Հայաստանում ներկայումս որպես նշված հիմնախնդրի լուծման տարբերակ դիտարկվում է անցումը կառավարման խորհրդարանական համակարգին, որն արդեն իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունվեց: Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է, որ հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես կառավարման ձևի առանձնահատկություններով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացմամբ, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումներով, այնպես էլ քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակով, կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածությամբ<sup>7</sup>:

Դիտարկվող խնդրի համարժեք լուծումներ կարող են գտնվել կառավարման խորհրդարանական համակարգի ներդրման պայմաններում՝ երկրի քաղաքական ուժերի միջև անհրաժեշտ քաղաքական փոխհամաձայնության պարագայում: Կառավարության կայունությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, կայունությունը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հան-

www.journal.lawinstitute.am

րապետությունում: Կայունությանը նպաստող միջոցներ կարող են լինել կոնստրուկտիվ անվտանգության քվեն և վարչապետի ուժեղ դերը պետական կառավարման համակարգում: Խորհրդարանի լուծարումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ ճգնաժամային իրավիճակներում Ազգային ժողովն ի վիճակի չէ ընտրել նոր վարչապետ: Գործող կառավարման համակարգի համեմատ սկզբունքորեն նոր դեր պետք է իրականացնի Հանրապետության Նախագահը, որը պետք է ընտրվի Ազգային ժողովի կամ ավելի լայն ընտրական կոլեգիայի կողմից խորհրդարանի լիազորությունների ժամկետը գերազանցող ժամկետով, մասնավորապես՝ սփյուռքի ներկայացուցիչների ընդգրկումը:

Ցանկացած անցում մեկ կառավարման համակարգից մյուսին ենթադրում է որոշակի ռիսկեր՝ ներառյալ պետության պաշտպանական-անվտանգային շահերի ապահովման տեսանկյունից: Այնուամենայնիվ, կառավարման մոդելի փոփոխությունը նոր խթան է հանդիսանում որոշումների կայացման համակարգում բարեփոխումների համար: Հայաստանի Հանրապետության համար անցումը կառավարման մեկ համակարգից մյուսին բնականաբար երկրորդանքի առջև է կանգնեցնում այն առումով, որ անհրաժեշտություն է առաջանում նախընտրություն անել երկու իրավիճակների միջև՝ քաղաքական և իրավական ներկայիս իրավիճակի պահպանում, որը մաս ռազմա-քաղաքական տեսանկյունից ավելի կանխատեսելի է ու վերահսկելի, և ռիսկերի որոշակի հավանականությամբ արմատական փոփոխությունների իրականացում՝ գիտակցելով, որ իրավիճակը կարող է անմիջապես չհանգեցնել այն արմատական բարեփոխումներին, որոնք ակնկալվում էին համակարգի փոփոխությամբ ի սկզբանե: Տվյալ առումով ընտրություն պետք է կատարվի ներկայիս նշված կայունության և լավագույնի տեսլականով հիմնավորված արմատական փոփոխությունների միջև:

Այս համատեքստում կարևոր է նաև դիտարկել Հայաստանի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողություններին նույնական և կառավարման խորհրդարանական մոդել ունեցող երկրների փորձը: Հարավկովկասյան տարածաշրջանային առումով պետք է փաստել, որ խորհրդարանական կառավարման ձևաչափին անցում կատարած Վրաստանի քաղաքական համակարգում առկա են հակասություններ նախագահի ու կառավարության միջև. այդ հակասությունները չեն հասնում պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծումը խոչընդոտող կրիտիկական կետի, իսկ պաշտպանության ու անվտանգության ոլորտում թե՛ նախագահը, թե՛ կառավարությունը, թե՛ խորհրդարանը ունեն նույն դիրքորոշումը արտաքին քաղաքական հիմնական կուրսի նկատմամբ: Չկան նաև շերտեր,

որոնք կխոչընդոտեն երկրի պաշտպանական կարողությունների զարգացմանն ու բարեփոխմանը: Դժվար է պատկերացնել ինստիտուցիոնալ խնդիրներ մաս երկրին ուղղված սպառնալիքի դեպքում համապատասխան միջոցների ձեռնարկման ժամանակ: Ավելին, փորձագետների կարծիքով, «Վրաստանում քաղաքացիական հասարակությունը վերջին տարիների ընթացքում ավելի է ուժեղացել, քաղաքացիական հասարակությունում դրական զարգացումներ են նկատվում, ինչից ելնելով էլ Վրաստանի քաղաքական զարգացումները հետաքրքիր են Հայաստանի, Ադրբեջանի և տարածաշրջանում չճանաչված պետությունների համար»:

Այդուհանդերձ, Վրաստանում խորհրդարանական կառավարման մոդելին անցումը հանգեցրել է պաշտպանական-անվտանգային ոլորտում նշանակություն ունեցող որոշումների ընդունման արդյունավետության նվազեցմանը, ինչպես նաև Ազգային անվտանգության խորհրդի փաստացի անգործունակությանը: Միաժամանակ, պաշտպանական-անվտանգային ոլորտում ձևավորվել են սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմիններ: Մասնավորապես, վարչապետ Բ.Իվանիշվիլին ստեղծել է Ազգային անվտանգության խորհրդի լիազորությունները կրկնող մարմին, որն Ազգային անվտանգության խորհրդին զուգահեռ շարունակում է գործել մինչ օրս:

Ժամանակային առումով չդադարող պատերազմական գործողությունների ու պարբերաբար ակտիվացող պայմանների տեսանկյունից կարևոր է նաև անդրադառնալ Իսրայելի խորհրդարանական կառավարման համակարգին և դրա դրսևորումներին երկրի պաշտպանության կազմակերպման գործընթացում: Իսրայելի տարածքային հակամարտությունը գալիս է դեռևս 1970-ական թվականներից, երբ արաբների ու հրեաների բնակության դասավորության փոփոխման պլանով նախատեսվեց որպես տարածքային պաշտպանության համակարգի ամրապնդման ռազմավարական ռեսուրս ստեղծել նոր հրեական բնակավայրեր<sup>12</sup>:

Իսրայելի բանակի (ՅԱՀԱԼ՝ Իսրայելի Պետության Պաշտպանության բանակ, եբր. TSAHAL – Tsva Haganah Le-Israel) առջև ծառայած առաջնային խնդիրն է հրեական և արաբ բնակչության շփման գծի պաշտպանությունը:

Իսրայելի պաշտպանական-անվտանգային համակարգում հաջողությունները բացատրվում են ոչ այնքան ժողովրդավարական ինստիտուտներով, որքան արմատավորված ազգային գաղափարախոսության, աշխարհագրական դիրքի, տասնամյակների ընթացքում հակամարտության պատճառով երկրում զինված ուժերի առանցքային դերի արմատավորման, խոշոր տերությունների կողմից

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Իսրայելի նկատմամբ բացարձակ հետաքրքրության ու դրանից բխող բազմամակարդակ աջակցության, այս ամենի արդյունքում նորարարության խթանման ու կայացած տնտեսության հանգամանքներով: Այս հաջողությունների հետ միաժամանակ հարկ է նշել, որ Իսրայելի խորհրդարանական մոդելում նույնպես դրսևորվում են բազմապիսի խնդիրներ:

Իսրայելի քաղաքական համակարգում խնդիրները, սակայն, չեն նշանակում, որ համակարգը գտնվում է ստատիկ վիճակում: Երկրի խորհրդարանական մոդելում պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ թե՛ ընտրություններից ընտրություններ, թե՛ գործունեության ընթացքում՝ ինստիտուցիոնալ և ընթացակարգային մակարդակներով: Կառավարման համակարգում առկա բազմաթիվ խնդիրներով հանդերձ թե՛ պետական, թե՛ գիտական, թե՛ վերլուծական օղակներում լիովին գերակշռում են երկրի խորհրդարանական մոդելը պահպանելու և այն կատարելագործելու տեսակետերը:

Միանշանակ, հարկավոր է համաձայնել ոլորտի հիմնադիր հետազոտողների կողմից նշվող այն տեսակետին, որ Հայաստանում այսօր անցկացվող պաշտպանական բարեփոխումների համատեքստում կարևոր է նաև հիմնվել Իսրայելի նախագահ և ռազմական հետախուզության նախկին ղեկավար Խայիմ Հերցոգի՝ Իսրայելի Պետության ներկայացման փորձի վրա, ով հրեա ժողովրդի պատմությունը ներկայացնում է որպես ազգային ինքնության պահպանման շարունակական հերոսական գործընթաց (բաժանելով 3 հիմնական ժամանակագրական փուլերի՝ օտարաբնակության պայմաններում պայքարի երկու հազարամյակ, գրեթե 100 տարի՝ Պաղեստին ներգաղթ սկսելուց հետո, Իսրայելի ազգային պետականության վերականգնման ու պաշտպանության 60-ամյա շրջան)<sup>13</sup>:

Նշված փորձի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում անցումը խորհրդարանական կառավարման համակարգին մեկ ակնթարթում տեղի չի ունենալու: Դա պայմանավորված է քաղաքական մշակույթով, արմատավորված ինստիտուտներով ու ընթացակարգերով: Այնպես ինչպես Վրաստանում, Հայաստանում ևս հնարավոր է աստիճանական անցում խորհրդարանական մոդելին, քանի որ նույնիսկ հասարակության մակարդակով երկիրը դեռևս պատրաստ չէ ունենալու Մեծ Բրիտանիայի կամ Գերմանիայի օրինակով խորհրդարանական կառավարման համակարգ: Մյուս կողմից, համակարգային այդ աստիճանական անցումը կարող է բացասաբար անդրադառնալ որոշումների ընդունման արդյունավետության վրա, երբ կառավարման հին մոդելը դեռևս ամբողջությամբ չի փոխարինվել նոր մոդելով: Այս փուլում է, որ ի հայտ

են գալիս հին ու նոր ինստիտուտների և նրանց գործառնությունների կրկնօրինակում: Որոշումների ընդունման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրավական մակարդակով իրավասությունների հստակ սահմանազատում՝ ընթացակարգային և ինստիտուցիոնալ ցավալի անցումներից խուսափելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է կայացնել քաղաքական ուժերի կայուն կոալիցիա որոշումների կայացման համակարգն ամրապնդելու և հնարավոր ներքաղաքական ճգնաժամերից խուսափելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ խորհրդարանական կառավարման համակարգը հնարավոր է որոշակի խոչընդոտներ առաջացնի որոշումների ընդունման ընթացակարգում, պաշտպանական անվտանգային ոլորտին ուղղված սպառնալիքների հավանականությունը փոքր է մի քանի պատճառներով:

Առաջին. այն երկրներում, որտեղ առկա է ուղղակի ռազմական սպառնալիք, պաշտպանական անվտանգային հարցերում գնահատվում է որոշակի միասնական մոտեցում երկրի անվտանգության հիմնական բաղադրիչների վերաբերյալ: Հնարավոր է լինեն տարածայնություններ երկրի անվտանգությունն ապահովելուն ուղղված հնարավոր ուղիների վերաբերյալ, սակայն, ինչ վերաբերում է վերջնաարդյունքին, քիչ հավանական է, որ կառավարման համակարգը խոչընդոտի մեծ հրատապություն ներկայացնող ռազմավարական որոշումների ընդունմանը: ՀՀ-ում թե՛ հասարակական, թե՛ քաղաքական մակարդակներում դիտարկվում է համընդհանուր մոտեցում պաշտպանական անվտանգային հարցերին, ու անկախ կառավարման համակարգից՝ այդ մոտեցումը կմնա որպես գերակա: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է իրավական մակարդակով ապահովել ճգնաժամային պայմաններում համակարգի ճկունությունը՝ ստեղծված իրավիճակին արագ արձագանքելու և նշված անհետաձգելի ռազմավարական որոշումների ընդունումը արդյունավետ դարձնելու համար: Այսինքն, համակարգը պետք է ապահովի անհրաժեշտ մակարդակի օպերատիվություն հիմնավորված հանգամանքներում:

Երկրորդ. չնայած խորհրդարանական կառավարման համակարգը ենթադրում է որոշումների ընդունման ավելի դանդաղ ընթացակարգ, համակարգը նպաստելու է պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործմանը: Խորհրդարանի դերի ընդլայնմամբ ուժեղանալու է ոլորտի նկատմամբ վերահսկողությունը, և ոլորտային որոշ խնդիրներ հնարավոր է ստանան ավելի արագ լուծումներ, քան ներկայումս՝ ելնելով փոխադարձ ներգրավվածության ավելի բարձր աստիճանից: Նման գործընթացը կհանգեցնի նաև ոլորտի իրավական դաշտի ավելի արագ կատարելագործման

ու իրավակիրառ ոլորտում բարեփոխումների: Ռա է պատճառը, որ չնայած խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրները որոշակի խնդիրներ են արձանագրում որոշումների ընդունման ընթացակարգում, այնուամենայնիվ միտված են այդ համակարգի կատարելագործմանը և ոչ թե այլ կառավարման համակարգի անցնելուն: Այս առումով անհրաժեշտ է նոր կառավարման համակարգի ներդրմանը զուգահեռ բարձրացնել նաև խորհրդարանի իրավական ու քաղաքական մշակույթի և առհասարակ ինստիտուտների փոխադարձ հարգանքի վրա հիմնված քաղաքական ավանդույթների ու լոյալ համագործակցության մակարդակները:

Երրորդ. խորհրդարանական կառավարման մոդելը ֆիքսված մոդել չէ, այսինքն, յուրաքանչյուր պետություն կարող է, գնահատելով ներկայիս իրավիճակը, ընտրել կամ ստեղծել քաղաքական ու իրավական իրականությունից բխող սեփական մոդելը: Ուսումնասիրելով խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների փորձը՝ անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն այդ երկրների հաջող փորձի, այլև անհաջող փորձի վրա՝ համակարգի ներդրման ընթացքում ի հայտ եկող խնդիրները, խոչընդոտներն ու հանգամանքները բացահայտելու և համապատասխան պլանավորում իրականացնելու համար:

Վերջնարդյունքում կարելի է ամփոփել, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացում անցումը կառավարման խորհրդարանական մոդելին իր դրական կողմերով հանդերձ կարող է առաջ բերել ռիսկեր հետևյալ ուղղություններում. ազգային անվտանգությանը վերաբերող որոշումների ընդունման արդյունավետությունը, վարչապետի և նախագահի իրավասությունների հստակ սահմանազատումն ու գործնական իրականացումը, պաշտպանական-անվտանգային ոլորտի ղեկավարման նոր համակարգի ձևավորումը, ներքաղաքական կոշտ զարգացումների և սահմանադրական կարգին սպառնացող վտանգների ժամանակ արտակարգ որոշումների կայացման հնարավոր բարդույթները: Նշված խնդիրների հետևողական ու փոխկապակցված չկարգավորման պարագայում Հայաստանում կարող է կանխատեսվել նաև ներքաղաքական ճգնաժամի որոշակի խորացում: ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացում դիտարկվող ռիսկերի ոչ լիարժեք գնահատումը միանշանակ կարող է վտանգել նաև պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետ գործունեությունը:

<sup>1</sup> Маркаров А.А. Полупрезидентализм в контексте постсоветской трансформации, Ер., Изд-во ЕГУ, 2008, С. 24.  
<sup>2</sup> Գրականության մեջ կարծիք է արտահայտվում, որ դրանք հանդիսանում են իրավական պետությանը ներհատուկ կառավարման ձևեր, քանի որ իշխանությունների բաժանումը իրավական պետության հատկանիշ է: Միաժամանակ, ոչ իրավական պետությունում գործում է մենիշխանության սկզբունքը, որին համապատասխան՝ ոչ իրավական պետության կառավարման ձևերը ևս հանդիսանում են մենիշխանական: Ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես միապետությանը, այնպես էլ հանրապետությանը: Калинович А. Э. Формы правления в правовом государстве (теоретико-правовой аспект), диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Санкт-Петербург-2008, С. 64-65. Ժամանակակից մենիշխանական հանրապետություն է Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (Հյուսիսային Կորեան): Григонис Э. П., Григонис В. П. Конституционное право зарубежных стран, СПб., 2002, С. 61.  
<sup>3</sup> Խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում իշխանության տարբեր ճյուղերի միջև առկա է զգալի փոխկապակցվածություն և փոխկախվածություն, որն էլ դրանց միջև պատնեշները դարձնում է ոչ այդքան հստակ: Черкасов А. И. Глава государства и правительство в странах современного мира: конституционно-правовое регулирование и практика, М., 2006, С. 4. Խորհրդարանական կառավարման ձևի բնութագրության հետ կապված՝ երբեմն գործածվում է «իշխանությունների սիմֆոնիա» եզրույթը, որի համաձայն՝ իշխանությունների բաժանումը չպետք է շատ կոշտ լինի: Васильев А. В. Разделение властей: теоретические аспекты и современная практика // Право и государство, теория и практика, М., 2006, N 7, С. 5.  
<sup>4</sup> Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В., 3-е изд., перераб. и доп. М.: Юристъ, 2001, С. 306.  
<sup>5</sup> Խորհրդարանական հանրապետությունների առավելություններն ու բերությունները նույն կերպ է բնութագրում Մ. Բ. Ազալը: Агаев М. Б. Президентская власть в системе государственной власти. М., 1994, С. 70-71.  
<sup>6</sup> Котелевская И.В. Правовая регламентация взаимодействия властей в парламентской деятельности // Вестник межпарламентской ассамблеи, 1994, т. 2, С. 25.  
<sup>7</sup> Габричидзе Б., Чернявский А. Конституционное право России, М., 2004, С. 803.  
<sup>8</sup> Հակոբյան Հ.Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, էջ 7:

<sup>9</sup> Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունեց Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ արձանագրությունը, 14.12.2015թ. // <http://newspress.am/archives/12812>

<sup>10</sup> ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը, Եր., մարտ 2014թ., էջ 21 // <http://moj.am/storage/uploads/A1.pdf>

<sup>11</sup> Մինասյան Սերգեյ. «Վրաստանը կամուրջ է դարձել մահ Հայաստանի և ԵՏՍ-ի համար», 20.06.2015թ. // [www.aravot.am/2015/06/20/583952/](http://www.aravot.am/2015/06/20/583952/)

<sup>12</sup> Քոթանջյան Հ.Ս. Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով // Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները, Եր., ՀՀ ՊՆ Գ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013, մաս 1, էջ 27:

<sup>13</sup> Քոթանջյան Հ.Ս. Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո // Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները, Եր., ՀՀ ՊՆ Գ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013, Մաս 1, էջ 118:

Арен Саркисян

Соискатель факультета международных отношений ЕГУ,  
старший офицер-юрист военного комиссариата РА,  
подполковник

## РЕЗИОМЕ

### *Особенности организации обороны в модели управления парламентской республикой*

В результате представленного в статье анализа можно сделать вывод, что в Республике Армения, с учетом последних внутри-политических развитий, при переходе на модель парламентского правления бойкот работы парламента парламентскими фракциями может привести к ограничению принятия парламентом решений, имеющих ключевое значение для интересов безопасности и обороны, также требующих качественное и абсолютное большинство голосов. В модели парламентского правления, с точки зрения стабильности государственной системы и обеспечения национальной безопасности, необходимо как риск оценивать надежность политического большинства и стабильной коалиции. В истории парламента Армении коалиции всегда были обусловлены наличием доминирующей политической силы. При отсутствии последнего вполне может быть под угрозой весь процесс политического управления.

**Ключевые слова:** модель управления, конституционные реформы, политическая система, правовая основа, власть, безопасность, оборона, парламент, правительство, интересы обороны и безопасности.

Aren Sargsyan

The PhD student of the faculty of international relations YSU,  
senior officer-lawyer of the Commissariat of RA,  
lieutenant colonel

## SUMMARY

### *Features of the organization of defense in the management model of a parliamentary republic*

As a result of the analysis presented in the article, it can be concluded that in the Republic of Armenia, taking into account recent developments in political, in the transition to a model of parliamentary government the boycotting of the parliament parliamentary factions may limit the adoption of decisions by parliament, having crucial importance for the interests of defense and security and also require high quality and an absolute majority of votes. In the model of parliamentary government, from the point of view of the state system and national security stability, the risk need to evaluate the reliability and stable political majority coalition. In the history of the Armenian parliament coalition has always been conditioned by the presence of the dominant political force. In the absence of the latter may well be threatened by the process of political management.

**Keywords:** management model, constitutional reforms, politic system, legal basis, power, security, defense, parliament, government, defence and security interests.